Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ուղևորափոխադրման մասնագիտացված ծառայությունների (Երևան-Վանաձոր-Ստեփանավան-Գոգավան և հետադարձ), (Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն և հետադարձ), (Գյումրի-Բավրա և հետադարձ) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

29 հունիսի 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող՝ Արթուր Մանուկյանը, անդամներ՝ Գագիկ Մկրտչյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Սամվել Ալավերդյանը բացակայում էր նիստից:

<u>Օրակարգ</u>
<u>ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման մասին</u>

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարտականությունները կատարող Արթուր Մանուկյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովի քարտուղար Սպարտակ Հարությունյանը ներկայացրեց, որ պայմանագիրը ստորագրելու և համապատասխան ապահովումները ներկայացնելու ժամկետը լրացել է՝ սակայն 3-րդ չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչված մասնակից «ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ-ն չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև համակարգ չի ներբեռնել (չի ներկայացրել) իր կողմից ստորագրված պայմանագիրը:

Հանձնաժողովը որոշեց՝

- Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով ու հրավերի 8.15-րդ կետով՝ «ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, վերջինիս վերաբերյալ նութերը համաձայն ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի և հրավերի 8.15-րդ կետի՝ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն (լիազորված մարմին)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան:
- Ընթացակարգը՝ 3-րդ չափաբաժնի մասով, հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով

_____ Արթուր Մանուկյան

_____ Գագիկ Մկրտչյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան